ծարաւը։ Մանաւորապէս Արեւելքից վերադարձող զօրավարները անբաւ հարստութեամբ էին մուտք գործում Հռոմ ու նրանց յաղթական թափորների մէջ Հռոմի ընչաքաղց ու զուարճասէր ամբոխին ամենից աւելի հրապուրողը հերոսի բերած աւարի բազմաղանութիւնն ու առատութիւնն էր։ Անշուշտ, այս բախտաւոր հրամանատարները՝ իրենց անձը նոյնպէս չէին մոռանում։ Լուկուլլոս ու Պոմպէոս այս տեսակէտից շատ հետաքրքիր օրինակներ են։

Ահա այս հաղարամեայ Հռոմն էր՝ դայլի ոտինքները ծծած, կատաղի ախորժակով առնագորոյն, որ ռազմապէս, քաղաքականապէս ու պետականօրէն կուռ կազմով շարժուեց մեր Տիգրան Մեծի վրայ՝ առաջին դարի առաջին կէսին (Ն.Ք.)։ Ճշմարիտ է. Հայաստան այդ ժամանակ հզօր աշխարհակալ պետութիւն էր եւ Տիգրան Բ. կայսր էր հայոց կամ Արքայից Արքայ, ինչպէս կոչւում էր նա այդ ժամանակ։ Եւ նա կարողացել էր արդէն զինու զօրութեամբ իր կայսերական դայլիսոնի տակ առնել իր չորս կողմի բազմաթիւ ազգերը։ Շորթել էր Պարթեւներից արքայից-արքայ տիտղոսը, հնազանդեցրել էր յոյն, հրեայ, սելեւկայի, արաբ եւ մեդացի, ինչպէս եւ կովկասեան բազմաթիւ խաժամուժներ։ Կովկասեան լեռնաշղթայից եւ Կասպից ծովից մինչեւ Եկբատան (Համադան), Միջագետք, Սիւրիա, Պաղեստին եւ Կապադովկիա ձգուող բոլոր երկիրները միացած էին Հայաստանին՝ Մեծն Տիգրանի միահեծան իշխանութեան տակ։

«Այս Արքայից-Արքան,— ասում է Պլուտարքոս,— որ այնպէս հզօր է, որ խլել է Ասիան Պարթեւներից, որ ամբողջ յոյն քաղաքներ վոխադրել է մինչեւ Մեդիա, որ հպատակեցրել է Պաղեստինն ու Սիւրիան, բնաջնջել է սելեւկիացիների յաջորդներին եւ նրանց կին ու աղջիկներին գերի է տարել»*)։

«Նա՝ Տիգրանը,— շարունակում է Պլուտարքոս,— շատ չնչին միջոցներով կարողացաւ հնազանդեցնել բազմաթիւ ազգեր եւ նուաստացնել Պարթեւների պետութիւնը, ինչպէս երբեք մինչեւ այդ որեւէ այլ իշխան չէր կարողացել անել։ Տիգրան բնակեցրեց Միջագետքը յոյներով՝ տեղահան անելով նրանց Կիլիկիայից, Կապադովկիայից եւ վաչկատուն արաբներին հանեց իրենց բնակավայրերից ու հաստատեց իր սահմաններում առեւտուրին ծառայեցնելու համար»**)։

Այնուհետեւ, ինչ որ ասում է Պլուտարքոս Տիգրանի պալատական կեանքի եւ գերի թագաւորների մասին, որոնցից չորսը իբր թէ ստրուկի պէս ծառայում էին նրան, թւում է հէքեաթ, որի նպատակն է հայ կայսրը ներկայացնել մի արեւելեան կատաղի բռնակալ։

Այստեղ, ինչպէս եւ ուրիշ շատ դէպքերում խօսողը պատմաբանը չէ, այլ աչառոտ մէկը, որ իբրեւ յոյն հանդուրժել չի կարողանում Տիգրանի տիրապետութեան՝ մանաւանդ յոյների վրայ։ Ակներեւ է, նաեւ որ Պլուտարքոս չափազանցելով Տիգրանի զօրութիւնը ճգնում է աւելի չչմեծնող դարձնել նրա պարտութիւնը ու աւելի կիզիչ՝ կրած նուաստացումի կսկիծը եւ աւելի մեծ՝ տարած յաղթութեան արժէքը։ Փաստն այն է սակայն, որ որչափ եւ իրապէս հզօր լինէր Տիգրան Արեւելքում Պարթեւների եւ Փոքր Ասիոյ վրայ, նրա հիմնած կայսրութիւնը տակաւին մանուկ էր Հռոմի հետ համեմատած։ Նրա ընկճած եւ հրպատակեցրած ազգերը մեծ մասամբ բարբարոս խաժամուժներ՝ խպառ զուրկ էին պետական ըմբռնումներից։ Իսկ աւելի քաղաքակրթուած յունական եւ հրէական տարրերը՝ նրան քօղարկուած թշնամի։

Հռոմը երեւի վաղուց էր աշխատել ներքուստ քանդել Տիգրանի պետութիւնը, քանի որ Պլուտարքոս որոշակի խօսում է հռոմէական կուսակցութեան մասին Հայաստանում։ Այսպէս, Ապպիուս, որ պատգամաւոր էր գնում Լուկուլլոսից դէպի Տիգրան՝ Միհրդատին պահանջելու, կարողացաւ իր ճամբին շատ հեշտութեամբ գրաւել հռոմայասէրների կողմը շատ թագաւորներ, որոնք դժկամակ էին Տիգրանի իշխանութիւնից։

«Բազմաթիւ նոր տիրապետած քաղաքներ,— ասում է Պլուտարքոս,— ծածկաբար պատգամաւորներ ճամբեցին Ապպիուսի մօտ, որ նրանց խոստացաւ Լուկուլլոսի օգնութիւ-

*) Պլուտարքոս, հատոր Բ. էջ՝ 516։

**) Պլուտարքոս, հատոր Բ. էջ՝ 526։